

ՄԻՍՐԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՎ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (XII—XV դդ.)¹

Գ. Հ. ՏՆՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

Այս հոդվածով նպատակ ունենք ընդհանուր գծերով ներկայացնելու հայ դրականության այն շերտը, որ առաջացել է լատինալեզու գրական մշակույթի կրող՝ ևվրոպական երկրների ու ժողովուրդների հետ հայոց սերտ շփումների արդյունքով, ուստի և «միարարական» անվան մեր գործածությունը սլավոնական է։ Միաժամանակ, գրականության ինքնուրույն և թարգմանական հատվածների միջև խիստ տարբերություն չենք դնում, որովհետև հատկապես միջնադարում դրանք հաճախ անզանազանելի են. որևէ գործ մի այլ լեզվի թարգմանվելու հետ՝ բնագրից հեռանում է նոր, ինքնուրույն կերպարանք ստանալու շափ։ Ի վերջո, այստեղ անհնար է (ըստ այդմ և՛ նպատակ չունենք) ընդգրկելու միարարական գրականության բոլոր հուշարձանները, այլ՝ ներկայացնելով կարևորագույն աշխատությունների հիմնական արժանիքները, ամբողջությունը պատկերելու ենք ընդհանուր գնահատականներով։

Քանի որ ցանկացած գրականության զարգացումն ապահովվում է փոխազդեցությունների և փոխհարստացումների եղանակով, ուստի կատարելապես ինքնուրույն, ինքնաբավ գրականություն կամ գրական մշակույթ լինել չի կարող։ Մեր գրական մշակույթը, բազմադարյան իր պատմության ընթացքում, անցել է զարգացման և առնչությունների բավական երկար ճանապարհ, փոխազդեցություններ է ունեցել բազմաթիվ ժողովուրդների և նրանց մշակույթների հետ, սակայն, բնականաբար, սերտորեն կապված լինելով քաղաքական պատմությանը, ամենի ճշգրիտ՝ լինելով նրա ածանցյալը, ազդեցությունների՝ սնուցման հիմնական աղբյուրի իմաստով ունեցել է հետևյալ հիմնական շրջաններ՝ ա. հունական կամ հունաբան (V—VIII դդ.), բ. լատինական (լատինաբան) կամ արևմտաեվրոպական՝ իր մի քանի ենթաշրջանով (XII—XVIII դդ.), դ. ռուսական կամ ռուսաբան (XIX—XX դդ.)²։

Լատինալեզու Արևմուտքի հետ հայության հարաբերությունները դիպվածային-պատահականից կանոնավորի են վերածվել XI դարի վերջերից՝ Արևելքում խաչակիրների հայտնվելու և նրանց իշխանությունների առաջացման հետ միաժամանակ։ Սկզբում այդ հարաբերություններն արտահայտվում էին XI դարի Կիլիկիայում ստեղծված հայկական իշխանությունների (1198 թ. ի վեր՝ թագավորության) և խաչակիրների քաղաքական շահերի զուգահեռների ու խաչածեմների տեսքով, բայց շատ արագ դրանք թա-

¹ Որպես զեկուցում 1936 թ. հունիսի 12-ին ընթերցվել է Ֆրանսիայի Ազգային գրադարանում կայացած՝ «Հայաստանի Արևելքի և Արևմուտքի միջև գիտաժողովում. ֆրանսերեն համառոտությունը տպագրված է՝ նույն ժողովին զուգահեռ բացված նույնանուն ցուցահանդեսի նյութերն ամփոփող մեծագիր, պատկերազարդ գրքում. La littérature des milieux unificateurs XII—X.V siècle).—Armenie entre Orient et Occident. Trois mille ans de civilisation. Sous la direction de Raymond H. Kévorkian, Paris, 1936, p. 62—4, 217.

² Պարզ է, որ այս դասակարգումը շատ մոտավոր, ըստ այդմ՝ կոպիտ ու միագիծ է՝ հիմնականի վրա շեշտ դնելով, շրջանցում կամ անտեսում է զուգընթաց՝ նույնիսկ էական և տեղական այլ երևույթներ։ Մեր՝ արևմտաեվրոպական անվանած շրջանը հատկապես արևմտահայ (մասամբ՝ նաև խորհրդահայ) իրականության մեջ ջարուհանկվեց նաև XIX—XX դդ.։

փանդիցին նաև առևտրատնտեսական, գիտական, հոգևոր-և կրոնական և այլ ոլորտներում:

Ինտեղիկացիները, մշակույթի ասպարեզում առնչություններն սկզբում արտահայտվելիս նախնական՝ միմյանց ճանաչելու ուղղված քայլերով, իսկ երբ XIII դարի երկրորդ կեսին խաչակիրներն աստիճանաբար կորցրին իրենց մայրցամաքային բոլոր ափսոսանքները և հարկադրված ամփոփվեցին Կիպրոս կղզում, Կիլիկյան Հայաստանի արժեքն ու կարևորությունը նրանց համար առավել քան մեծացավ. ցամաքային առևտրական ուղիներով Հրե-կաստանի, Չինաստանի ու Հնդկաստանի միջով Մեծ Նավթի հետ նրանց կապն այդուհետև հնարավոր էր պահպանել միայն Կիլիկյան Հայաստանի վրայով, այստեղ էլ, առևտրականների կողմից, ավելի հիմնավոր հաստատվեցին նաև պապական առաքյալները՝ հիմնականում փրանկիսկյան և դոմինիկյան կրոնավորները: Միաժամանակ, մահմեդական իշխանությունների շրջապատման մեջ հայտնված Կիլիկյան Հայաստանը իր գրկեցների նվաճողական նկրտումներին դիմագրավելու միակ միջոցն սկսեց առնել հավատարմից Եվրոպայի քաղաքական օգնության՝ խաչակրաց իրար արշավանք կազմակերպելու մեջ. Կիլիկյանում գործող քարոզիչների և նրանց հայ խոսակիցների ջանքերով սկսեցին կազմվել և եվրոպական արքունիքներ ներկայացվել նոր խաչակրությունների ծրագրեր. Ավինյոնի պապերի և Կիլիկյան իշխանների միջև միջնորդի դեր կատարելով, նույն քարոզիչները հասան նրան, որ երկուստեք՝ 1307 և 1316 թ. չափ Սուլում, ապա՝ Ադանայում Կիլիկիայի աշխարհական և եկեղեցական վերնախավները ժողովով միաբանեցին կաթոլիկ եկեղեցուն՝ ընդունելով նրա ծեսը, դավանանքը և պապի գերիշխանությունը: Կիլիկիցիները ինքադրուձ էին, որ դրանց հաջորդելու են խաչակրաց արշավանքները և որ այդուհետև իրենք տարածքային շարունակական կորուստներ չեն ունենալու, այսինքն՝ քանի որ իրենք հպատակվել են պապին, ապա նա փրկելու է իրենց: Խաչակրությունների նոր ծրագրեր կազմող հայ գործիչները քաղաքական օգնության ուրիշ ուղի տեսնել չէին կարող, նրանց ղործակից լատին քարոզիչներն էլ, գուցե, անկեղծորեն հավատում էին իրենց ստեղծած ծրագրերի իրականացմանը, անկեղծորեն, բայց, ցավոք, խաչակրություններն արդեն իրենց սպառել էին, և նոր արշավանք կազմակերպելն անհնար էր: Ուստի Կիլիկիցիների «միաբանական» ժողովների միակ շոշափելի արդյունքն այն եղավ, որ տասնամյակներ շարունակ Կիլիկյան բանագնացները, օգնության խնդրանքով, այցելում էին հիմնականում Ավինյոն և եվրոպական այլ արքունիքներ և որ այդ բանակցությունների արդյունքով ստեղծվել և պահպանվում են պատմական մեծ ու բազմակողմանի արժեք ունեցող փաստաթղթեր: Հաճախ նույն բանազնացների ջանքերով էլ լատիններից հայերեն էին թարգմանվում տարաբնույթ արժեքավոր գրական երկեր:

XIII դարի երկրորդ քառորդին հիմնականում Իտալիայի տարբեր քաղաքներում հաստատվել էին հայ առևտրականներ՝ իրենց «Հայ տներով», հաջորդ՝ XIV դարի սկզբում, Իտալիա և եվրոպական այլ երկրներ տեղափոխվեց «Հայ բարսեղյանները» բազմաճյուղ միաբանությունը, որի գործունեությամբ ստեղծվել են թե՛ հայերեն և թե՛ լատիններեն գրական (հիմնականում՝ ծիսական) երկեր ու փաստաթղթեր:

Խաչակրաց իշխանությունների հաստատման ժամանակներից ի վեր պապական քարոզիչները հիմնավորվել էին դեպի Արևելք ձգվող առևտրական ճանապարհի հիմնական հանգուցակետերում, այդ թվում՝ նաև բուն Հայաստանում, ուր նրանց հենակետերը հաստատվել էին դեռևս 1240-ական թթ., Կարինում, Անիում, Արտազում, Տփլիսում, Թավրիզում և այլուր պապական քարոզիչների հաստատված և գործած լինելը վկայող վավերական և արժեքավոր փաստեր կան: 1318 թ. ստեղծվեց դոմինիկյան միաբանության արևելյան գործունեության մեծ և ծավալուն մի միավոր՝ Սուլթանիայի արքեպիսկոպոսությունը, որ ընդգրկում էր բուն Հայաստանից մինչև Հնդկաստան Արևելք և որի երեք եպիսկոպոսություն տեղաբաշխված էին Պարսկաստանի

երեք հալածական քաղաքներում՝ Բալթիկում, Մարաղայում և Դեհիսարկանում: Մարաղայի եպիսկոպոս Բարթոլոմեոս Բոնոնիացու և նրա հայ գործակիցների ջանքերով էլ 1330 թ. Նախիջևանի գավառի Քոնա գյուղաքաղաքում հաստատվեց «Հայ միաբանողների եղբայրությունը», որի մի ճյուղը շատ շուտով ապաստանեց Ղրիմի Կաֆա քաղաքում³:

Որքան էլ հիմքում աղնիվ ե բարի լինեի կաթոլիկ դավանանքի ընդունումով հայրենիքը (բուն Հայաստանը կամ Կիլիկիան, ըստ եվրոպական աղբյուրների՝ Փոքր Հայաստանը) քաղաքական զորակցությամբ ապահովելու և ազատագրելու գաղափարը, այդուհանդերձ, թե՛ նախընթաց դժվարներն էին ցույց տալիս և թե՛ հետագա իրադարձություններն ապացուցեցին այդ գորակյություն և ուղղափառական օգնության անհրաժեշտ, անհնարին լինելու: խաչակրությունը XIV դարում արդեն իրեն սպառած երևույթ էր. եթե պապականությունը կամ եվրոպական այլ քաղաքական ուժ Արևելք չալու ընդունակ լինեի, ապա գոնե կկանխվեի խաչակրաց իշխանությունների անկումը: Հետագայում արդեն սկսվեցին թուրքական զանազան ցեղերի ու ցեղախմբերի խառնիճադանձ ապաստակությունները, նվաճումները և, ի վերջո, ձևավորումն Օսմանյան հսկա կայսրության, որ մի պահ նույնիսկ սպառնում էր Եվրոպայի ու եվրոպական քրիստոնեության գոյությանը. երկար ժամանակ փակել էր Արևելք գնացող առևտրական ուղիները և եվրոպական երկրներին հարկադրել ծովային ուղիների փնտրտուքին:

XI—XIV դդ. հայ-եվրոպական առնչությունների արդյունքով հայության մեջ առաջացավ կաթոլիկություն ընդունած մի հատված՝ «միարարների»⁴ հասարակական հոսանք, որի մի մասը մեկուսի կյանքով ապրում էր ազգակցորեն հարազատ, դավանանքով՝ օտար հայկական միջավայրում՝ բուն Հայաստանում կամ Կիլիկիայում, մյուս մասը՝ ազգակցորեն օտար, դավանանքով հարազատ եվրոպական երկրներում: Կիլիկյան Հայաստանի թագավորության անկումից (1375 թ.) հետո կաթոլիկացած հայերը մեծ մասամբ տեղափոխվեցին Եվրոպա. բուն Հայաստանի նույնադավան փոքրաքանակ համայնքների ճակատագրին վերաբերող տեղեկությունները շատ չեն, բայց կան առանձին փաստեր, որոնք ենթադրել են տալիս, թե նրանք էլ Կաֆայի վրայով կամ այլ ուղիներով պետք է անցած լինեն նույն ապահով Եվրոպա: Առավել տևական կյանք ունեցավ միայն Նախիջևանի գավառի համայնքը, սակայն ի վերջո նրանք էլ ընկրկեցին. տիրապետողների ճնշումների տակ XV—XVI դարի վերջերին նրանց մեծ մասը մահմեդականություն ընդունեց, քչերը՝ Զմյուռնիայի վրայով կամ այլ ուղիներով տեղափոխվեցին Եվրոպա (Նախիջևանի գավառի ներկայիս հայաթափ վիճակի և ներկայիս՝ Նախիջևանի աղբյուրներով հանրապետության գոյության սկզբնապատճառներից մեկն էլ այս է):

Դեպքերի այս ընթացքը հայ իրականության և պատմագիտության մեջ միարարական հոսանքի և նրա գործունեության նկատմամբ առաջացրել է մերժողական մի վերաբերմունք⁵ որ, ցավոք, բավական երկար ժամանակ

³ Հայության՝ այժմ գոյություն ունեցող կաթոլիկ հատվածը Եվրոպայի և պապականության հետ եղած այս վաղ առնչությունների հետ ծագումնաբանորեն կապ չունի. այն անմիջական արդյունքն է ժամանակագրորեն ավելի նոր երևույթի՝ Թուրքիայի հետ և նրա վրայով Արևելքի հետ կապվելու՝ XVI դարի վերջերից եվրոպական երկրների ձեռնարկած քայլերի, 1630-ական թթ. Հոռումում Ուրբանյան դպրոցի սկսած գործունեության և զուգընթաց պատմական այլ երեւույթների:

⁴ «Միարար» անունով նկատի ունենք XIII—XIV դդ. և՛ բուն Հայաստանում, և՛ Կիլիկիայում, և՛ Եվրոպայում կենցաղավարած գործիչներին ու համայնքները, նրանց շարքում նաև Նախիջևանի գավառի «Միարանող հայ եղբայրներին»՝ „I'atrl Armeni Unitores“:

⁵ Միարարական հոսանքի և ընդհանրապես պապականության հետ հայոց հարաբերությունների պատմությունը միշտ գնահատվել է կուսակցականության դիրքերից. կաթոլիկ հեղինակները (մեծ մասամբ՝ եկեղեցականներ) անվերապա էրազմի են հայտարարել այս երեւ-

Ռուբեն-Ռայմոնդին՝ Վեճն առժամանակ հարթվեց. վերջինս պետք է իրագործեր լեռնի ձգտումը՝ ճանաչված լինելով իբրև ապագա միացյալ թագավորության գահաժառանգ, Ահա այս առաքելության ընթացքում Հեթում-Հեղի լամբրոնացին 1210 թ.՝ «ի վերայ ծովուս, ի նաւարկութեանս մերձ յաշխարհըն լոյաց, որ կոչեն լունկուպարտք», «ի հռովմայականէն ի մերս» է թարգմանել պատմական այն երկմասնյա դրվածքը, որի առաջին մասի վերնագիրն է՝ «Շարադրութին կայսերացն Հռովմայեցւոց, Բիւզանդացւոց և Սրբազան կայսրութեան Հռովմայ՝ յօգոստոսէ մինչև ի Փիլիպ եղբայր Հեռիցի Զ», իսկ երկրորդինը՝ «Շարադրութին հայրապետացն Հռովմա, որք յ սուրբ առաքելոյն Պետրոսէ մինչև ցայժմ հովուեն զաթոռն»։ Պարզել ենք, որ այս թարգմանության հիմքը եղել է Հուգո Սուրբ Վիկտորցու (Փարիզի նույնանուն արքայության աստվածաբանության վարդապետի)¹⁰ ժամանակագրության մի տարբերակը¹¹. որի բովանդակությունը բավական սխեմատիկ է. հերթական համարներ, տիրակալների անուններ և նրանց գահակալման տարեքանակներ. բայց սրա հալերենացումն ինքնանպատակ չէր և չի կարող բացատրվել միայն նավագնացության ժամանակ թարգմանչի հարկադրական անգործությանը։ Ավելի հավանական է մտածելը, թե քաղաքական առաքելությունամբ պապի և կայսեր մոտ գնացող Հեթում-Հեղին ահհրաժեշտ է համարել ունենալու նրանց նախորդներին վերաբերող մի համառոտ պատմական տեղեկանք, որ իր հերթին նշանակում է, թե միաբարական այս առաջին թարգմանության շարժառիթը քաղաքական էր։

Սրկրուդ նույնաբնույթ թարգմանությունը վերաբերում է XIII դարի վերջին. «Կառմութին խրոնիկոնին, զոր նուաստ ծառայս Քրիստոսի Հեթումս՝ տէր Կոստանոյ փոխեցի ի Ֆռանգ զրոց ի թուին հայոց 266 (1296)»¹², Ֆ. Ֆրանկը և Վ. Հակոբյանը, ելնելով խորագրից, այս գործի թարգմանիչ համարել են նշանավոր Հեթում պատմիչին¹³, իսկ Ն. Վ. Ակինյանը՝ Կիլիկյան Հայաստանի Հեթում II թագավորին (1289—1307)¹⁴. Թեև երկու Հեթումն էլ պճնված էին փրանկիսկյան «եղբայր» (irater) տիտղոսով և տեսականորեն երկուսն էլ կարող էին այդպիսի թարգմանություն նախաձեռնել, բայց արդարությունը պահանջում է հավանական համարելու Ն. Ակինյանի տեսակետը, որ հենվում է հետևյալ կուլանների վրա. նույն 1296 թվականը և նույն «Հեթում տէր Կոստանոյ» ստորագրությունը կրող մի փոքր տարեգրություն, որ Վ. Հակոբյանը հրատարակել է Հեթում II-ի անունով¹⁵, հաղորդում է, որ ապագա պատմիչ Հեթումն ու իր եղբայր Օշին Կանչեցին 1293 թ. թագավորի դեմ անհաջող դավադրություն են կազմակերպել, ապա՝

¹⁰ Նրան վերաբերող տեղեկությունների ամբողջությունը և երկերի լիակատար մատենադիտությունը տե՛ս Repertorium fontium historiae Medii Aevi, t. V, Romae, 1984, p. 594—603.

¹¹ Հմմտ. Chronica quae dicitur Hugonis de Sancto Victore.—Monumenta Germaniae Historica, Inde ab anno Christi quingentesimo usque ad annum millesimum et quingentesimum..., Scriptorum, t. XXIV, Hannoverae, 1879 (վերահրատարակություն՝ Stuttgart—New-York, 1962), p. 8—101. Հայերեն սարքերակի (պատրաստում ենք ապագրություն) միակ օրինակը Վատիկանի հայերեն հմր ք ձեռագիրն է. տե՛ս Codices Armeni Vaticanae Borgiani, Vaticani, Earberiniani... Recensuit Evgenius Tisserant, Romae, 1927, p. 208—210.

¹² Տե՛ս Մանր ժամանակագրություններ, ԺԳ-ԺԸ դդ., հ. Բ, Երևան, 1956, էջ 33—33:

¹³ Recueil des Historiens des Croisades. Publie par les soins de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, Documents Arméniens, t. 1, Paris, Imprimerie Impériale, 1869.

¹⁴ Տե՛ս Հանգես ամսօրյա, 1957, էջ 506—8 (դրախտություն «Մանր ժամանակագրություններ»-ի զույգ հատորի)։

¹⁵ Տե՛ս Մանր ժամանակագրություններ, ԺԳ-ԺԸ դդ., հ. Ա, Երևան, 1951, էջ 65—70:

1294 թ. փախել (իմա՝ աքսորվել) Կիլիկիայից¹⁰, որից հետո պատմիչը Կիպրոսի վրայով անցել է Եվրոպա և այլևս հայրենիք չի վերադարձել, ուրեմն և՛ 1296 թ. նա Կոռիկոսի տերը չէր և այդպես ստորագրել չէր կարող։ Իսկ որովհետև «Կոռիկոս կարևոր բերդը պետք ուներ նոր տիրոջ, Հեթում կրոնավոր¹¹ հարկ համարած էր հեռանալ վանքեն և երթալ Կոռիկոս 1293—1296 տարիներուն՝ մինչև ցնոր տնօրինություն»¹²։

«Պատմութիւն խրոնիկոնին» երկն ըստ էության դեռևս հետադուրս չէ պարզ չէ՝ այն որևէ որոշակի գործի թարգմանություն է, թե՛ մի քանի աղբյուրից արտածված քաղաքություն-թարգմանություն. անհայտ են նաև հուշարձանը (հուշարձանները) և լեզուն (լատիններն կամ ֆրանսերեն), որից այն փոխադրված է։ Սակայն կարևոր է, որ գիտենք Հեթում II-ի արտաքին և ներքին քաղաքականության հիմնական միտումը, ըստ այդմ և դիտենք նրա հեղինակած երկը։ Ժամանակագրությունը բավական պարզ կառուցվածք ունի. սկսում է Քրիստոսից, վերադառնում որոշ ավետարանական գրույցներ, ժամանակագրական կարգով, մեծ մասամբ սխալ թվականներով ներկայացնում է Հռոմի ու Եվրոպայի աշխարհիկ ու հոգևոր տերերին, կրթման հպանցիկ հիշատակում Բյուզանդիայի պատմության առանձին դրվագները։ XI դարի վերջերից շարադրանքի մեջ երևում են նաև խաչակիրները, Արևելքի նրանց իշխանություններն ու իշխանավորները, XII դարի սկզբից սրանց վերաբերող տեղեկությունները գերիշխում են, և ժամանակագրությունը դառնում է խաչակրական. կարելի է մտածել, որ կվրոպական բնագիրը կա քաղաքի էր Արևելք եկած որևէ խաչակիր կամ ուխտավոր։

Կիլիկյան Հայաստանին վերաբերող տեղեկությունները, որոնց հեղինակը ենթադրաբար հայ թարգմանիչն է, նույնիսկ նույն թարգմանիչն վերագրվող՝ ժամանակագրության վերջին հատվածում, այնքան են, որքան պահանջում է դեպքերի ընթացքը։ Խաչակիր Արևելքի մասին գրող ցանկացած Եվրոպացի հեղինակ պետք է առնվազն այդչափ անդրադառնար խաչակիրների հետ բաղմամբ թեկնորվ կապված Կիլիկիային։ Իրականում Կիլիկիային վերաբերող տեղեկություններն արտացոլում են հենց այդ կապերը. գործի ռազմական ընթացքում (նույնիսկ վերջում) Հայաստանը երևում է ոչ թե իբրև թարգմանիչ հայրենիք, այլ՝ խաչակիր Արևելքի մի տերություն։

Այսպիսով, «Պատմութիւն խրոնիկոնին» երկը խաչակրաց ժամանակագրություն է, որը հայերեն տարբերակում հիմնականում պահպանել է իր դիմագիծը. և՛ բնագրային հիմնական մասով, և՛ թարգմանական հնարավոր հավելումներով այս ժամանակագրության բերած պատմագիտական նորությամբ Կիլիկյան պատմության առանցքային դեպքերը խաչակրաց ընդհանուր պատմության իրողությունների հետ միահյուսված ներկայացնելն է։ Պետք է նկատի ունենալ, որ Հեթում-Հեղի Համբրոնացու ժամանակ Կիլիկիայի և Եվրոպայի հարաբերությունները թեկնորում էին միմյանց մասին անհրաժեշտ տեղեկությունների ձեռքբերում, իսկ «Պատմութիւն խրոնիկոնին»-ի արտածման օրերին այդ հարաբերություններն այնչափ էին սերտացել, որ «Փոքր Հայաստանը» խաչակրաց աշխարհի մաս չդիտվել չէր կարող։

Սրանից ուղիղ կես դար անց՝ 1338—1352 թթ. ընթացքում, բուն Հայաստանում և Կիլիկիայում հուզումներ առաջացրած ն. Պալիանենց¹³ անու-

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 86—7։

¹¹ Հեթում թագավորը ժամանակ առ ժամանակ զահը փոխանցում էր իր եղբայրներին և վանք քաղվում, ապա՝ կրկին բազմում զահին։

¹² Տե՛ս Հանդես ամսօրյա, 1957, էջ 507։

¹³ Նրա գլխավորությամբ նույն տարիներին կազմվել էր հայ եկեղեցուն վերադրվող 117 «մուրումնային» վերադարձված մի գրքույկ. տե՛ս Recueil des Historiens des Croisades. Publié par les soins de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, Documents Arméniens, t. II, Paris, 1906, p. CCVIII—CCXXVII; E. Tournet, Histoire politique et religieuse de l'Arménie..., Paris, 1900, p. 350—358; Մ. Օրմանյան. Ազգապատ-

նով Լպիսկոպոսը, Ալիսիոնում և Իտալիայի տարբեր քաղաքներում հայերենի վերածննդ Մարտինոս Օպավադու «Ժամանակագրություն քահանայապետաց և կայսերաց» (*Chronicon Pontificum et Imperatorum*)²⁰ երկը, որ նախորդների համեմատ բավական ծավալուն է և որը պատմության պապականության պաշտոնական տարբերակն ու հանձնարարելի դասադիրքն է ու Ի տարբերություն VIII—X դդ. պապական ժամանակագրությունների կամ «Պապական դրքերի» (*Liber pontificalis*), որոնք համառոտ կամ ընդարձակ ներկայացնում են միայն պապերի վարքերը, նաև՝ եվրոպական առանձին երկրների պալատական պատմությունների ու թագավորների վարքերի, Մառտինոսի գործն ունի թե՛ աշխարհիկ և թե՛ եկեղեցական պատմություններ, և հավելումն՝ նաև հին աշխարհի (Արևելք և Հուստ) պատմությունը կամ մարդեության նախնական (նախաքրիստոսյան) պատմությունը, այս ամենն շնորհիվ էլ դարձել է ընդհանրական-տիեզերական պատմության ձևերից²¹, Եվրոպական իրականության մեջ սա իր ստեղծման օրերից մինչև XVI դարի վերջերս մեծ հռչակ ու տարածում ստացավ՝ ունի հարյուրավոր ձեռագիր ընդօրինակություններ և երկու հնատիպ հրատարակություն (Բադեյ, 1559, Անտվերպեն, 1574)։

Միջնադարյան եվրոպայի ըմբռնումով՝ տիեզերական-ընդհանրական սլատություն այս ձևերակի ընդգրկումն ու տարողությունը ներսես Պալիսինիցն ընդարձակել է լատինալեզու այլ աղբյուրների բազմաթիվ նոր տեղեկություններով, դրանով իսկ՝ կրկնակի մեծացրել նույն պատմության՝ հայ ընթերցողին մատուցվող տարբերակը։ Միաժամանակ, հրեաքաջ շարագրանքի նա վերադարձել է Հայոց պատմության առանձին կարևոր դրվագներ, իսկ վերջում կցել է Հայոց կաթողիկոսների և թագավորների ժամանակագրական՝ իր ընդարձակ համառոտ դանկերը, սրանով իսկ՝ Հայոց պատմությունը դիտել է իբրև նույն եվրոպական տիեզերական պատմության մաս։ Համարիստոնեական միասնականության գաղափարական առաջնիք վրա հենված այս միահյուսմամբ՝ հայերեն փոխադրությունն իր լատիներեն նախորինակից շատ ավելի է մոտեցրել մերօրյա դիտության՝ ընդհանուր պատմությանը վերաբերող պահանջներին. սրանով իսկ հայերեն փոխադրության հեղինակը մի քանի առաջ է տարել հայ պատմագիտական միտքը։

Ի վերջո, հայերենացվելու օրերից մինչև XVII դարի վերջը շարունակ ընդօրինակվելով և եվրոպական ու հայկական այլ աղբյուրներից առնված նոր հատվածներով ու հավելվածներով օժտվելով, Մարտինոս Օպավադու ժամանակագրությունը հայերեն փոխադրությունը դարձել է նախ հիմքը ստեղծման պատմագրական նոր երկերի, որոնցով հայերենացվել է նաև հետագա դարերի եվրոպական պատմական ավանդույթը, ապա՝ հանրագիտական-տեղեկատու իր բնույթի համեմատ այն եղել է ուղի միջնադարի հայ պատմագրության սնուցման կարևոր աղբյուրներից մեկը²²։

տում. Հայ ուղղափառ եկեղեցույն անցրելը սկիզբէն մինչև մեր օրերը՝ յարակից ազգային պարագաներով պատմուած. հ. Բ, Կոստանդնուպոլիս, 1913, §§ 1291—1308. Գրիգոր Պետրովիչ. Միաբանող եղբայրները և հայ եկեղեցին (1330—1360).—Հանդես ամսօրյա, 1970, էջ 59—74։

²⁰ *St. Martini Opiaviensis Chronicon Pontificum et Imperatorum*, Edidit L. Weiland.—*Monumenta Germaniae Historica, Inde ab anno Christi quingentesimo usque ad annum millesimum et quingentesimum...*, Edidit G. H. Pertz, Scriptorum, t. XXII, Hannoverae, 1872 (վերահրատարակություն՝ Stuttgart—New-York, 1963), p. 377—482։

²¹ Սա ամենաբնորոշ ներկայացուցիչն է XIII դարի ընթացքում առաջացած պատմագրական այն ժանրի, որի անունն է՝ «տիեզերական պատմության համառոտ ձևերակներ», սրանց առաջացումը պայմանավորված է առաջին հերթին դոմինիկյանների ու փրանկիսկյանների գործունեությամբ. նրանց առաջընթաց պապականություններից ազդեցություն է։

²² Այս խնդրի մի առանձին ուսումնասիրության նյութ է, ուստի այստեղ մանրամասներ մեջ չենք մտնում։

Պատմագրությունն ու պատմագիտությունը մշակութային առնչություններն ուրվագծորեն պատկերելու համար ընդհանրապես որոշիչ լինելով²⁸ հանդերձ, միայնակ չեն կարող ներկայացնել երեւոյթի ընդհանրականությունը։ Միաժամանակ, նկատենք, որ լուրն Հայաստանում, Կիլիկիայում Դրիմում կամ եվրոպական տարրեր երկրներում կենցաղավարած՝ միարարական հոսանքի գրեթե ընդհանուր համայնք-միավորներում խմբական ծրագրերով և ընդհանրական ջանքերով կամ առանձին գործիչների անհատական նախաձեռնությամբ յատկաներն ից կամ յատկնադավան ժողովուրդների ազդային լեզուներից հայերենի են փոխադրվել հարյուրավոր մեծածավալ և փոքրածավալ երկասիրություններ։ Նրանց շարքում բավական շատ են ծիսական մատյաններ՝ Բրեվիար (ժամագիրք), Միսալ (Պատարագամատույց), Դիուռնալ (ժամագիրք) և այլն։ Ըստ մեր օրերի չափանիշների՝ սրանց դիտական արժանիքները երկուսն են. ա) հայ միարարների ծեսի սյուսմության ուսումնասիրման աղբյուրներ են (միշտ չէ, որ այս ծեսը լիովին նույնական է կաթոլիկականի հետ, որովհետև հաճախ կան նաև ազդայինի վերապրուկներ). բ) հայոց լեզվի, մասնավորապես միջին հայերենի բառադանձի և քերականական երևույթների հետադոսման կարևոր սկզբնաղբյուրներ են։ Այս երկու իմաստով էլ մեծ արժանիքներ ունի գիտությանը քիչ հայտնի և հեղինակային միակ ձեռագրով²⁹ պահպանված՝ նույն Ներսես Պալիանենցի հեղինակած «Լատինական» Մաշտոցը, որ նույնական չէ ժամանակի կաթոլիկական որևէ ծիսարանի հետ, քանզի մեր հեղինակը, իր սովորության համաձայն, նրա մեջ մուծել է թե՛ յատկնական տերմինների հայերեն տարաբնույթ բացատրություններ (սրանով ներկայացնելով հայերենի բառադանձի նոր շերտեր), թե՛ նկարագրվող յատկնական ծեսի հայկական զուգահեռներ և թե՛ զանազան առիթներով Ավինիոնում կամ այլ տեղերում իր տեսած արարողությունների նկարագրություններ։

Սակայն այս հոսանքի գործիչների ջանքերով ստեղծվել են նաև դիտական ավելի բազմաբնույթ արժեք ունեցող՝ իմաստասիրական, քննադատական, աստվածաբանական, մեկնողական, իրավաբանական և այլ բնույթի աշխատություններ, որոնք զգալի հետք են թողել հետագա դարերի հայ դիտական մտքի զարգացման վրա։ Ընդհանուրի մասին համառոտ պատկերացում տալու մտահոգությամբ, թվարկենք 1330—1340-ական թթ. միայն Նախիջևանի Քոնա գյուղաքաղաքում ստեղծված մատենագրության առանձին երկեր։

ա. Զիբերտոս Պոռետացի (մհ. 1154 թ.), Գիրք վեդիգ սկզբանդ (De sex principibus), 1334 թ., թարգմ. Պետրոս Արադոնացին և Հակոբ Քոնեցին³⁰։

բ. Ալբերտոս Մեծ (1193—1280), Համառոտ հաւաքումն աստուածաբանականի ճշմարտութեան. 1344 թ., թարգմ. Պետրոս Արադոնացին և Հակոբ Քոնեցին։

գ. Թովմա Աբուինացի (1225—1274), Հաւաքումն աստվածաբանութեան (Summa Theologiae) 1329—1344 թթ., թարգմ. ևն Հովհաննես Քոնեցին, Հովհաննես Անդիապոլսի, Պետրոս Արադոնացին և Հակոբ Քոնեցին։

դ. Բարթոլոմեոս Բոնոնիացի (13-րդ դ.) Գիրք ի վերայ երկուց բնութեանց և մի անձնաւորութեան ի Քրիստոս. 1329 թ., թարգմ. Հովհաննես Քոնեցին։

²⁸ Տարբեր հավաքածուների պահպանման ձևերում կան մանր ու մեծ՝ բաղադրված անտիպ պատմական գրվածքներ, որոնց համադիր բնույթով արժեք պատրաստել հայ-եվրոպական պատմագիտական աղբյուրների վերաբերող՝ մի գրքի սահմաններում չտեղավորվելիք ուսումնասիրություն։ Մի այլ աշխատանքի հիմք են լատինալեզու պատմական այն գրվածքները, որոնք ունեն Հայաստանի և հայոց վերաբերող հաճախ աղբյուրից աղբյուր անցնող տեղեկություններ։

²⁹ Վենետիկի Միխիթարյան մատենադարանի ձեռ. հմր 86։

³⁰ Դավարամատչիկության պատճառով Պետրոս Արադոնացին գրել է նաև սրա մեկնությունը։

և. Բարթուղիմեոս Բոնոնիացի, Գիրք դժոխոց. 1329 թ., թարգմ. Հովհաննես Քոնեղին:

դ. Բարթուղիմեոս Բոնոնիացի, Համառոտ հաւաքումն և յոյժ օգտակար ի դիպէթիկէն, որ է Տրամաբանութիւն:

է. Բարթուղիմեոս Բոնոնիացի, Յաղագս Վեցօրեայ գործոց արարչութեանն., թարգմ. Հակոբ Քոնեղին:

ը. Բարթուղիմէոս Բոնոնիացի, Քարոզգիրք. 1331 թ., թարգմ. Հակոբ Քոնեղին:

թ. Պետրոս Արաղոնացի, Գիրք դատաստանաց՝ հաւաքեալ ըստ կանոնայ եկեղղոյն Հոռվմայ. 1331 թ. թարգմ. Հակոբ Քոնեղին:

ժ. Պետրոս Արազոնացի, Գիրք առաքինութեանց. 1339 թ., թարգմ. Հակոբ Քոնեղին:

ժտ. Պետրոս Արաղոնացի, Գիրք մոլութեանց, 1340 թ., թարգմ. Հակոբ Քոնեղին:

ժբ. Պետրոս Արազոնացի, Համառոտ վերլուծութիւն Ստորագութեանցն Արիստոտէլի. 1344 թ., թարգմ. Հակոբ Քոնեղին:

ժդ. Պետրոս Արաղոնացի, Վերլուծութիւն գրոցն Պերի արմենիաս. 1344 թ., թարգմ. Հակոբ Քոնեղին:

ժդ. Պետրոս Արաղոնացի, Համառոտ հաւաքումն ի վերայ ներածութեան Պորփիրի. 1344 թ., թարգմ. Հակոբ Քոնեղին:

ժե. Համառոտ հաւաքումն ընդդէմ հերետիկոսաց, որ կոչի Սուր Պետրոսի, թարգմ. Պետրոս Արազոնացի և Հակոբ Քոնեղին:

Առանձնապէս կարևոր է միարարական գրականութեան մի անտեսված հեղինակի՝ Մխիթար (Մխիթարի) Ապարաներցու՝ շուրջ 1410 թ. գրած հիմնական դործը. «Գիրք ուղղափառաց ըստ կաթօլիկէ սուրբ եկեղեցո եւ ընդդէմ հերձուածողաց», որ պահպանվել է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում դառնվող՝ հեղինակային երկու ձեռագրով²⁶, Այդ պատճառով էլ նրան վերաբերող միակ, համառոտ խոսքի հեղինակը Ղ. Ալիշանն է, որ ընդհանուր ծանոթություններ է տվել գործի մասին, Ապարաներցուն իրավացիորեն դասի հայ պատմիչների շարքը²⁷, տպագրել նրա երկի պատմական արժեք ունեցող մի հատված²⁸, որի մեջ միարար հեղինակը հայերին բաժանել է դավանական շորս խմբի, Սսի միաբաններ, սոնթեր (սսեցիներ) բաժանված հայություն բուն՝ մեծ մասը), ծայթեր (հունադավաններ) և միաբանողներ (հոռմեադավաններ):

Ինչպես վերնագիրն է հուշում, շուրջ 50 գլուխ (25 հրատ. մամուլի ծաւալ) ունեցող դործը հիմնականում ջատագովական՝ վիճաբանական է. արծարծած հարցերն ընդգրկուն և ընդարձակ են, նրանով կատարյալ պատկերացում ենք ստանում «Հայ միաբանող եղբայրների» համայնքի պատմության, կյանքի, ծեսի, դավանանքի, իմաստասիրական մտածողության, Հոռմի և իրենց շրջակա միջավայրի հետ հարաբերությունների ու այլ իրողությունների մասին:

26 Ձեռ. հմր 334 և 1663 (ունենք սրանց ժապավեն-պատճենները՝ Մաշտոցյան Մատենադարան, այլ վայրերի ձեռագրերի ժապավենների հավաքածու, հմր 1128 և 1132), Հմր 334-ը հեղինակի առաջին տարբերակն է՝ լի շնչումներով, ուղղումներով, սրբագրություններով ու հավելումներով. հմր 1663-ն ավելի մաքուր երկրորդ մշակումն է և էլի գերծ չէ շնչումներից ու սրբագրումներից, անդամ՝ ունի խոսքի պակասը լրացնելու համար բաց՝ չգրված թողած շատ տեղեր, այսինքն՝ մտադիր էր շարունակելու աշխատությունը՝ Երկու օրինակն էլ թերթերի ղգալի անկումներ, անընթեռնելի դարձած հատվածներ և այլ թերություններ ունեն. այսուհանդերձ, արժեքավոր այս բնագրի հրատարակումը հնարավոր և անհրաժեշտ է:

27 Հայագիտում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Յօրինեալ եւ հաւաքեալ ի Հ. Ղեւոնդեայ վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1901, Ա. Պատմիչք Հայոց, էջ 123:

28 Նույն տեղում, Բ. Պատմութիւնք Հայոց, էջ 550—3: Ալիշանի խոսքը փոքր հավելումներով երկրորդել և լատիներենի է թարգմանել Մ. Ուղենրիյնը՝ LHS, ք. 215—28:

Աղբյուրի այդ արժանիքների բացահայտումն այլ առիթի թողնելով, գլուխների խորագրերի սոսկական մեջբերումով, արժե մի փոքր ավելացնել նրա պատմական արժեքին վերաբերող տեղեկությո՞ւյթ (էջահամարները շնչելով, բաղում ենք հմր 1663 ձեռագրից)։ «Ա. Յաղազս անուան գրոցս», «Բ. Յաղազս կանոնաց եւ սահմանաց ընթերձողաց եւ դորժածողաց զգիրքս գայս», «Գ. Յաղազս նախալորութիւն գրոցս», «Դ. Յաղազս պատճառաց գրոցո՞ղբն եւ միշտ միաբան հայոց ընդ սուրբ եկեղեցոյ», «ԼԴ. Յաղազս պատճառաց մոլորութեանց հեթանոսաց եւ հրէից, հերձուածողաց եւ հերետիկոսաց», «ԼԵ. Յաղազս յատուկ պատճառաց մոլորութեանց միայն հայկեաց», «ԼԶ. Յաղազս ի պէսպէս մոլորելոց եւ յորպիսութենէ մոլորութեանց նոցա», «ԼԷ. Յաղազս աստիճանաց հաւատոյ եւ եօթն խորհրդոց սուրբ եկեղեցոյ, որք են ընդդէմ հերետիկոսաց», «ԼԸ. Յաղազս պատճառաց անդրդուի հաստատութեան կաթողիկէ սուրբ եկեղեցոյ ի ճշմարիտ հաւատն Քրիստոսի», «ԼԹ. Յաղազս ուղղափառ ընդհանրական եւ կաթողիկէ ժողովոց ընդդէմ հերձուածողաց», «Խ. Յաղազս ժողովոց հայոց երբեմն ընդդէմ յունաց վասն նախանձու եւ միո՞ կողմանց եւ երբեմն՝ վասն միաբանութեան եւ հնաղանդութեան Հռոմայ սուրբ եկեղեցոյն», «ԽԱ. Յաղազս վասն ուխտից եւ միայրանութեան հայկեաց ընդ պարսից, գի բարձցեն զքրիստոնէութիւն յաշխարհէ»։ Պատմութեան եւ պատմականի կարեւորում են նաեւ հետեւյալ կցումները. «ԽԲ. Աթաւնասի ժամանակագրութիւն՝ ծննդաբանութեամբ ըստ Մատթէոսի Աւետարանին», «ԽԳ. Նստերի ժամանակագրութիւն՝ ըստ թարգմանութեանցն», «ԽԴ. Յաղազս Պարսից թագաւորութեանցն եւ Հայոց», «ԽԵ. Յաղազս Պարսից թագաւորութեանցն եւ իշխանութեանցն Հայոց՝ համալսականութեանդ թուոյ Աղէքսանդրու Մակեդոնացո եւ ընդ մարդեղութեան Տեառն» (վերջինս այլ ձեռքով է՝ ինչ-որ մեկը սրանով շարունակել է հեղինակի ծրագիրը)։

Սրանք եւ սրանց նման երկերը հայ իրականութեան մեջ մոծեցին անտիկ եւ եվրոպական գիտութեան՝ մինչ այդ հայութեան անժանոթ բազմաթիւ նվաճումներ եւ իրողութիւններ, որոնց շնորհիւ գիտական միտքը Հայաստանում ստացավ զարգացման մի նոր՝ թարմ ազդակ, որ կարեւոր դեր ունեցավ հատկապէս բնագիտական մտքի զարգացման համար։ Միաբարական ինքնուրույն եւ թարգմանական աշխատութիւնները դրեթե առանց բացառութեան սկսեցին ո՞չ միայն ընդօրինակվել, այլեւ լայնորեն օգտագործվել հետագա դարերի հայ հեղինակների աշխատութիւնների մեջ։

Հայ միաբարական գրականութիւնն քսա էութեան եղավ այն կարեւոր հիմքը, որի վրա հետագա՝ հատկապէս XVII—XIX դդ. հայերենացվեց եվրոպական գիտական, գեղարվեստական եւ բազմաբնույթ այլ կարգի հսկա գրականութիւն եւ որի շնորհիւ հայ գրական մշակույթը կարողացավ արձանագրել համամարդկային արժեք ու հնչեղութիւն ունեցող նվաճումներ։ Այս ամենի սկզբնապատճառներն ու նախադրոյալները պարզվելու են հայ միաբարների ինքնուրույն եւ թարգմանական գրական արտադրանքի մշակութաբանական մանրակրկիտ հետազոտութիւններով, որոնք մեր գիտութեան կուրոր. անելիքներին են։